ՆԱԽԱԳԻԾ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

## ԵՐԵՎԱՆ  ՔԱՂԱՔԻ  ԱՎԱԳԱՆԻ

_____2014թ.  №_____-Ա

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.37 շենքի հ.38՝ 66.1 քմ մակերեսով  բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հ.08012014-01-0017 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Էվելինա Շահիրյանին ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ  Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
# <<ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մարգարյան փողոցի հ.37 շենքի հ.38՝ 66.1քմ մակերեսով երկու սենյականոց բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Էվելինա Շահիրյանին:

Էվելինա Շահիրյանին 2003 թվականին շնորհվել է ՀՀ վաստակավոր արտիստուհու կոչում, իսկ 2014 թվականին պարգևատրվել է ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալով: Շուրջ 45 տարի է ինչ աշխատում է Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում: Աննկարագրելի է այն մեծ ավանդը, որ ներդրել է հանրահայտ արտիստուհին հայ ժամանակակից թատրոնի զարգացման գործում: Նա այն եզակի արտիստուհիներից է, որոնք էականորեն ազդեցին արդի թատրոնի զարգացման ընթացքի վրա՝ այն դարձնելով ավելի ինտելեկտուալ, ժամանակակից և առավել հմայիչ:

Էվելինա Շահիրյանը երկար տարիներ հայ հեռուսադիտողին է ներկայացրել նաև որպես հաղորդավարուհի՝ վարելով տարբեր, մեծ ժողովրդականություն վայելող հաղորդումներ: Նա կերպարանավորել է շուրջ 60 դերեր, խաղացել 150 պիեսներում, ինչպես նաև բազմաթիվ ֆիլմերում:

Էվելինա Շահիրյանի բնակարանային պայմանները բարելավելու նպատակով միջնորդություն է ներկայացրել նաև Երևանի դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ Արմեն Խանդիկյանը:

Վաստակաշատ դերասանուհին մինչ օրս բնակվում է իր տղայի չորս անձից բաղկացած ընտանիքի հետ համատեղ, չունի առանձին բնակարան, ինչպես նաև բնակվելու և ստեղծագործելու նորմալ պայմաններ:

Հաշվի առնելով նրա ունեցած ներդրումը հայ թատրոնի զարգացման գործում, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման խիստ անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է Երևան քաղաքի ավագանու սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ